

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«Աշան-Արմ» ՍՊԸ-ն ԵԹ-ԷԱՃԱՊՁԲ-25/212 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Աշան-Արմ ՍՊԸ, Ա. Ավետիսյան ԱՁ, Ա. Հովհանիսյան ԱՁ	<p>Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության նպատակային ծրագրերի շրջանակներում սոցիալապես անապահով թվով 250 դպրոցահասակ 1-7-րդ դասարան հաճախող երեխաներին տրամադրելու համար անհրաժեշտ է ձեռք բերել թվով 250 հատ (125 տղա, 125 աղջիկ) պայուսակ գրենական պիտույքներով, որից 125 հատ (65 տղա, 60 աղջիկ) նախատեսված 1-4-րդ դասարանների համար, իսկ 125-ը (65 տղա, 60 աղջիկ)՝ 5-7-րդ դասարանների համար՝ յուրաքանչյուրը հետևյալ պարունակությամբ. Պայուսակ աշակերտական - 35-45 սմ լայնությամբ և 40-45 սմ բարձրությամբ, 10-12 սմ խորությամբ, քաշը՝ 300-400 գրամ, հարմարեցված ձեռքով բռնելու (բռնակ) և ուսերին զցելու համար: Պայուսակը դրսից պետք է ունենա առնվազն երկու կայծակաճարմանոց գրպաններ, որոնք պետք է լինեն ամուր և որակյալ, դրանց բռնակները երկաթյա կամ չճկվող ամուր հումքից: Պայուսակը ներսից պետք է բաժանված լինի երկու կամ երեք մասի: Պայուսակի ներսում նախատեսված լինի շղթայով գրպանիկ՝ մանր իրերի համար, որի չափերն են 15-20 սմ, շղթան և շղթայի գլխիկը լինի մետաղական կամ չճկվող ամուր հումքից: Պայուսակը պետք է պատրաստված լինի բարձրորակ, չթրջվող ամուր գործվածքից, պոլիեսթեր 100%, առանց յուրահատուկ հոտի, Էկոլոգիապես մաքուր (պատվիրատուի պահանջով ներկայացվի սերտիֆիկատ՝ Էկոլոգիապես մաքուր հումքի</p>

վերաբերյալ), առավելագույնս ջրադիմացկուն, գերծ տարատեսակ քիմիական ներկանյութերի հոտերից, հետևամասը պետք է լինի հատուկ օրթոպեդիկ գոգավորությամբ (պատվիրատուի պահանջով ներկայացվի համապատասխան սերտիֆիկատ օրթոպեդիկ կառուցվածքի վերաբերյալ): Պայուսակի ուսակալները պետք է լինեն ամուր և փափուկ ամրակներով: Պայուսակի առջևի մասում նախատեսված լինի շղթայով դարակ 25-30սմ չափերով: Պայուսակի մեջքի, հատակի և առջևի հատվածները ունենան չճկվող ամուր ներդիրներ: Պայուսակի երկու կողմերից պետք է լինեն հատուկ տեղեր շշով հեղուկի համար: Պայուսակի վրա ցանկալի է ամրացված լինի բեյջ՝ տվյալներ լրացնելու համար: Պայուսակի ներսի հատվածը պետք է որակյալ աստառապատված լինի: Պայուսակի գույնը և նկարագրողումը՝ ըստ պատվիրատուի:

Յուրաքանչյուր պայուսակ պետք է պարունակի՝ Տետր - 3 հատ առնվազն 96 էջանի, վանդակավոր, բարձր որակի Տետր - 3 հատ առնվազն 96 էջանի, տողանի, բարձր որակի Տետր - 4 հատ առնվազն 48 էջանի, վանդակավոր, բարձր որակի Տետր - 4 հատ առնվազն 48 էջանի, տողանի, բարձր որակի Տետր -3 հատ առնվազն 24 էջանի, վանդակավոր, բարձր որակի Տետր -3 հատ առնվազն 24 էջանի, տողանի, բարձր որակի Տետր - 5 հատ առնվազն 12 էջանի, վանդակավոր, բարձր որակի: Տետր - 5 հատ առնվազն 12 էջանի, տողանի, բարձր որակի Գրիչ - 7 հատ, գնդիկավոր, փակիչով, կապույտ գույնի Գրիչ - 3 հատ, գնդիկավոր, փակիչով կարմիր գույնի Գրչատուփ - 1 հատ, պատրաստված լինի չճկվող ամուր հումքից, բացվի գրքածև՝ 180 աստիճանի, փականը (ցեպ) և գլխիկը լինի մետաղյա կամ չճկվող ամուր հումքից, չափսերը՝ երկարությունը առնվազն 20 սմ, լայնությունը՝ առնվազն 12 սմ, բարձրությունը առնվազն 2,5 սմ:

Գրչատուփի բացված կողմերի վրա ներսից կարված լինեն ռեզինե ժապավեններ՝ բաժանարարներով, նախատեսված գրիչների, մատիտների, ռետինի, սրիչի և այլ գրենական պիտույքները ամրացնելու և տեղավորելու համար: Պատրաստված էկոլոգիապես մաքուր, ամուր, որակով հումքից: Գունավոր մատիտ - 1 տուփ, առնվազն 24 գույն (ոչ երկկողմանի), 6 անկյուն կամ եռանկյունե կտրվածքով: Մատիտների տուփը լինի հաստ ստվարաթղթից, մատիտների երկարությունը առնվազն 18 սմ, փափկությունը HB, պատրաստված էկոլոգիապես մաքուր հումքից: Քանոն - 1 հատ, ուղիղ գծաբաժանումներով, հարթ եզրերով, լավ մշակված և հղկված, թեթև լաքապատ, երկկողմանի գծանշումներով, գծանշումների մակերեսը ուռուցիկ, երկարությունը՝ առնվազն 30 սմ: Ռետին - 1 հատ, նախատեսված մատիտով գրվածները ջնջելու համար: Սրիչ - 1 հատ, մատիտ սրելու համար: Նկարչական ալբոմ - 1 հատ, առնվազն 32 թերթ,

		<p>հաստ սովարաթղթե կազմով: Կերոնշյալ բոլոր ապրանքները պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետությունում գործող ազգային ստանդարտներին (ՀՍՏ) պայմաններին: Առաջարկվող բոլոր ապրանքները նախապես համաձայնեցնել վարչական շրջանի ղեկավարի պատասխանատու ստորաբաժանման հետ:</p>
--	--	---

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

«Ашан-Арм» ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵԲ-ԷԱՃԱՊՁԲ-25/212 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
1		